

ՄՈՒԲԱՅԼ ԲԱՆԿԻՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԿԱՐԳ

1. «UNIMobile» բջջային հավելվածի (այսուհետ՝ Հավելված) միջոցով սպասարկման ընթացքում գործարքները կարող են հաստատվել անցակոդի, ինչպես նաև մատնահետքի կամ դեմքի նույնականացման համակարգի (Face ID) միջոցով՝ տվյալ սարքում նման հնարավորության առկայության դեպքում:

2. Մատնահետքի կամ դեմքի նույնականացման համակարգի կիրառման ժամանակավոր անհնարինության դեպքում Հավելվածն ինքնաշխատ եղանակով առաջարկում է օգտագործել անցակոդը:

3. Անցակոդի մոտքագրումը, մատնահետքի կամ դեմքի նույնականացման համակարգի կիրառումը հավասարազոր է հաճախորդի բնօրինակ ստորագրմանը, և դա հիմք է Բանկի համար՝ Հավելվածի միջոցով ծառայությունների մատուցման համար:

4. Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել փոխել գաղտնաբառն, եթե առաջացել է գաղտնաբառի հրապարակման վտանգ կամ այն արդեն հրապարակվել է կամ այլ կերպ հայտնի է դարձել այլ անձանց:

5. Մոտքանունը և գաղտնաբառը Հաճախորդին հանձնելու պահից սկսած դրանց անվտանգ և գաղտնի պահելու պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

6. Յուրաքանչյուր կողմը՝ Բանկը և Հաճախորդը, պարտավորվում է առանց մյուս կողմին նախապես ծանուցման և գրավոր համաձայնության Բանկի և Հաճախորդի միջև կնքված Պայմանագրի/Դիմում-պայմանագրի հետ չկապված նպատակներով չօգտագործել և որևէ երրորդ անձի չհաղորդել, բացառությամբ հետևյալ տեղեկատվության՝ Պայմանագրին/Դիմում-պայմանագրին առնչվող ցանկացած տեղեկատվություն, որը հանդիսանում է կամ կարող է հանդիսանալ բանկային, առևտրային և ՀՀ օրենսդրությամբ պահպանվող այլ գաղտնիք, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ գաղնտի համարվող այլ տեղեկատվություն:

7. Բանկը Հաճախորդին ծառայություններ մատուցելիս առաջնորդվում է այն կանխավարկածով, որ Հաճախորդի կողմից կատարված բոլոր գործարքները և տրված բոլոր հանձնարարականները համապատասխանում են Հաճախորդի կամքին և ցանկությանը և կատարվում են վերջինիս գիտությամբ, քանի դեռ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հակառակը չի ապացուցվել կամ Հաճախորդը չի հայտնել այդ մասին: